

ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

Ե. - ԺԵ. ԴԱՐ

Բուն նոտագրութեան սխտեմում, երաժշտական նշանները կոչուել են զխազ, որ նշանակում է զիծ: Խազերը Ե.-ԺԷ. Դարեւում ունեցել են գործածութեան երկու շքրջան. Ե.-ԺԱ. Դար և ԺԱ.-ԺԷ. Դար: Այս ժամանակամիջոցում խազերը զարգացել են, կատարելագործուել և զգալի փոփոխութեան ենթարկուել: Առաջին շքրջանի խազերը նեւմային (Neuma) ընոյթ ունեն, աւելի պարզ են, որոնց միջոցով մեր նախնիները ձայնագրել են սաղմոսներ, երգեր, ասուածք և շարականներ: Այս շքրջանում օգտագործուած զլիսաւոր խազերը հետեւեալնքն են.

Է. Առուանուութեան խազեր
 Ը. Կէտադրութեան խազեր
 Թ. Ոճական խազեր
 Ժ. Կապող և զատող խազեր
 Ժա. Կիսանիշ խազեր

Սակայն այս բաղմատեսակ և բարդ խազերը կիրարկուել են աւելի ուշ շքրջանում: Այս հարուստ խազերի միջոցով կարելի էր զրի առնել երաժշտական բաւականին բարդ ստեղծագործութիւններ:

Հայկական երաժշտութեան մէջ ձայնաքիչերը գրուած են հորիզոնական շարքով, եթէ երաժշտութիւնը խօսքեր ունի՝ խօսքե-

Շեշտ	՝	Բութ	Վ	Փուշ	✓
Սապ	օ	Երկար	՛	Ուզնճ	Ք
Էկորճ	ձ	Բենկորճ	Բ	Մենկորճ	✓
Դաշտ	Վ	Ուրբակածուեկ	ԲՅ	Չարկ	✓
Կերկ	Ն	Չակորճ	Ք	Կրկնուորակ	Մ Մ
Ներքնախազ	Մ	Վերնախազ	ՄՄ	Սուրբուային	՛ ՛
Թուր	Յ	Ղերկ	Ձ	Հուհայ	ճ
Փաթութ	Ճ	Կիսախաթութ	Ճ	Թալաւորայ	Ձ

Երկրորդ շքրջանի խազերը աւելի մշակուած և մարմաման են եղել, ինչպէս Շնորհալին յիշում է իր «Ընդհանրական» թըղթում: Այս շքրջանի խազերը անհամեմատ աւելի շատ են եղել քան նախորդ շքրջանի խազերը: Կոմիտաս Վարդապետ նշում է խազերի հետեւեալ տեսակները.

- ա. Չայնաստիճանի խազեր
- բ. Չարդախազեր
- գ. Չայնուժի խազեր
- դ. Ամանակի խազեր
- ե. Չայնեանի խազեր
- զ. Բանակի խազեր

րից վեր: Երբեմն պատահում է նաեւ որ ընթերցումը հեշտացնելու համար դործածուած են սողի վրայ, բառերի բաց թողնուած միջոցներում: Խազերի հետ միասին գործածուել է նաեւ մեր այբուբենը, որը հաւանաբար ցոյց է տուել մեղեդիների կատարման ձեւը. օրինակ՝ «ոչ ուժդին, «զ» զարկ, «զ» դիր, «ս» սրէ, «ճ» ետ ձգէ, «բ» քաշ, «խ» խազ, «զ» դող, «ճ» ծանր, «լ» լար, «պ» պինդ և այլն: Ամէն մի տառ մի բառի սկզբնատառն է եղել: Յաճախ տառեր ունեցող խազը կէտեր ունի: «Շարակնոցում տառերի գոր-

ծածուկների յաճախակիութիւնը հետեւեալ կարգով է .

Վ, Ս, Վ, Ղ, Ն, Լ, Է, Կ, Դ, Գ» (*):

ԺԲ. Դարում իւրաքանչիւր տառն առնւում էր երկու կէտերի մէջ - օրինակ՝ .պ., .վ., .ս., .ե ալիք, իսկ ԺԳ. - ԺԴ. Դարերում էրբեմն մի կէտ է պահպանուել, երբեմն էլ բնաւ չի դրուել :

Պաղարքերում հանդիպում են նաեւ կրկնակի տառեր, մասնաւորապէս ս և բ : Օրինակ՝ սբ. սբ. : Այս նշանները աւելի ծանր եղանակներէ, ստեղծներէ մէջ են հանդէս գալիս, քան սովորական շարականներէ մէջ :

Այս եւս փաստ է, որ տառերը կատարման նշաններ են, որովհետեւ ծանր եղանակները աւելի կատարողականութիւն են պահանջում քան յորդորակները : Միջին Դարերում կրկնակի սովորով ձայնածաւալը բաժանուած է եղել զխաչակախին», զեղզուախին» և զլիլխաչին» տեղաձայնի ուղարկութիւնն :

Միջին Դարերում զործածուող խաղերը հաւանաբար այժմեան եւրոպական ձայնանշիշերի սխտեմը չեն ունեցել . նրանք ցոյց են տուել միայն ելեւէջներ և ձայնական խաղեր, որպէսզի հնարաւոր չլիցի սեղանային կրկնակիների իւրացումը : Պաղարք, ենթադրուած է, որ ձայնագրական գորութիւն չեն ունեցել, այսինքն չեն ունեցել այն բոլոր հնարաւորութիւնները ինչ այժմեան Լիմոնեանի խաղերը կամ եւրոպական ձայնագրութիւնը : Այս ենթադրութիւնը զալիս է նրանից, որ խաղերը իւրաքանչիւր վանկի միջոց չեն փոխուում, մինչդեռ իւրաքանչիւր վանկ արտասանելու համար պէտք է մի խաղ կամ մի հնչիւն, որպէսզի առնուազն մի շնչիւնով երգուեն բանաստեղծական խօսքերը, վանկերը : Պարզ երեւում է որ խաղերը զործածուած էին ընդհանրապէս տուել եղանակի ցոյնզոյն երանդներ և խաղերը ցոյց տալու համար, և ոչ թէ իւրաքանչիւր վանկի բարձրութիւնն ու հնչականութիւնը :

Քանի որ ձեռագիր շարականների խաղերը ընդհանրապէս այս պատկերը ունեն, ուստի չի կարելի ճշգրիտ իմանալ, կարգաւ տուելու երգի կամ մի շարականի եղանակը : Այս երեւոյթը ցոյց է տալիս որ խաղերի

սխտեմը կանոնաւոր չափով ձեւուած չէր, ինչպէս եւրոպականը - և քանի որ մեզի հասած որեւէ ձեռագիր էլ չունենէ՞ թափանցիլու և իմանալու համար խաղերի գաղտնիքը, միջնադարեան եղանակները կանգնել փորձող երաժշտի առաջ շատ խոչընդոտներ են լինելու, որոնք յաղթահարելը այնքան էլ հեշտ չի լինելու :

Պաղ չունեցող բառերը մօտաւորապէս երկու համար անհրաժեշտ է իմանալ ձայնի (ԱԶ. , ԲԿ. և այլն) յատուկ դարձուածքները և վարպետութեամբ շարկապել խաղ ունեցող բառերին, թէ՛ իմաստի և թէ՛ եղանակի ոգու համաձայն : Պաղերի սխտեմում նշան չկող վանկեր եղել են սկզբից մինչև վերջ : Դրանք կան թէ՛ հին, թէ՛ միջին (շարականի) ձայնագրութեան և թէ՛ խաղարքերի չափազանց բարդ գրութեան մէջ, և թէ՛ աշխարհիկ երգերի խաղերում :

Գնան շատ երգեր (ինչպէս Հողեւոր, այնպէս էլ աշխարհիկ), որոնք մէջ ընդհանրապէս սակաւ նշաններ կան և նշան չկող վանկերը աւելի շատ են : Հասկանալի է որ այդ երգերը չէին կարող մի հնչիւնով միապազաղ կրկնութիւն լինել : Ուշադրաւ է նաեւ այն, որ անխաղ վանկեր հանդիպում են երբեմն նաեւ երգերի սկզբում : Յաճախ նշան չեն ունենում երգերի նախավերջին մի քանի վանկերը (վերջում՝ երկար նշանն է) : Անշուշտ չի լինի ենթադրել, թէ այսպիսի երգերը մի հնչիւնի բազմիցս կրկնութեամբ են աւարտուել, քանի որ կասկածից վեր է թէ այս կամ այն ձայնի պատկանող երգեր, անկախ մեզի բնոյթից, ունեցել են իրենց յատուկ մեղեդիի կազանսահեւեր : Բացի դրանից, նշան չկող վանկեր կան բոլոր տեսակի խաղերից յետոյ : Այսպէս, օրինակ, մի մեծ նշանախումբից յետոյ (որը ցոյց է տալիս բարդ մելոտիկ դարձուածք ժամանակակից նոտագրութեամբ՝ մէկ-երկու տող երկարութեամբ), նշան չկող վանկը հազիւ թէ հնարաւոր լինէր այդ դարձուածքի վերջին շնչիւնի ձայնով կրկնել մի քանի անգամ, քանի որ կարեւորն այս դէպքում ո՛չ թէ առանձին հնչիւններն են, այլ՝ դարձուածքները» (**):

(*) Ռ. Աքայեմ, «Հայկական խաղային նոտագրութիւն» :

(**) Ռ. Աքայեմ, «Հայկական խաղային նոտագրութիւն» :

Նշան չունեցող վանկերի ձայնական արժեք կարող է կապուած լինել նաեւ յաջորդ վանկի խաղի նշանակութիւնից: Այսպէս, եթէ յաջորդող խաղի նշանակութիւնը կապուած է յաղի որոշակի աստիճանի հետ, նախորդող նշան չկրող վանկը կարող է նախաարտասանել անցումը դէպի այդ աստիճանը: Հնչիւնների մի խումբը, երբեմն ամբողջական մեկուսիկ մի-մի դարձուածք մէկ նշանով էին գրի առնուով. այսպիսի դարձուածքները ճշգրիտ կարգալու կամ երգելու համար պէտք է դիմել տուեալ ձայնին յատուկ մեկուսիկ դարձուածքների և խմբաւորումների. այսինքն, ԱՁ-ին յատուկ դարձուածքները պէտք է որոնել ԱՁ-ին մէջ, և թէ՛ ձայնը ԱՁ է: Ռ. Աթայեանը յիշատակում է թէ համար 8307 ձեռագրում (1365) խաղերի տախտակը հետեւեալ վերնադիրն է կրում. «Անուանք եղանակաց ձայնից, դիւտից իմաստնոց»: «Նշանակից» է առում և ոչ թէ «խաղից», որովհետեւ իւրաքանչիւր խաղ, նշան, կարող է նաեւ հանդէս գալ իր մի եղանակ կամ մեկուսիկ մի դարձուածք: Ասիկա շատ շուրջ մի հարց է և մինչև այժմ յստակ չի պարզաբանուել, որովհետեւ մեր խաղերի լեզուն տակաւին չի յայտնարեւել:

Մեր եկեղեցական երաժշտութիւնը հիմնուած է ութ ձայների և երկու ստեղի եղանակների հիման վրայ: Հայկական ութ ձայները ե՞րբ և ո՞ւմ ձեռքով մուտք դործեցին Հայոց մէջ՞ չգիտենք, այդ մասին ոչ մի յստակ տեղեկութիւն չունենք: Աւանդութիւնը ամէն ինչ վերագրում է Ս. Սահակին և Ս. Մեսրոպին (ինչպէս լատինաց մէջ Գրիգոր Առաջինին և Ամբրոսիոսին): Ստեփանոս Օրբելեանը ութ ձայների կարգաւորումը վերագրում է Ստեփանոս Սիւնեցուն. «Բաժանեալ և զութն ձայնն և կարգեաց շարեաց կայրութեան օրհնութիւնն երգեաց կցորդս քաղցրահնչիւնս, յարմարեաց զազոտոպիս յինանց եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր և զպահոցն, որ զազուհացն երգի...»: Ոչ մասին ակնարկութեան կայ նաեւ Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան մէջ, թէ ո՞վ գտաւ ձայները և որտեղի՞ց. «Սերաներոյն Բարսեղի յաղագս ձայնից թէ ուստի՞ և կ'ում յւամէ՞ գտան, զոր թարգմանեաց Ստեփանոս Փիլիսոփայ՝ զի նա եղև երաժիշտ և

ճօնու ձայնից ամենայն կենդանեաց և բաժանեաց զձայնս ի մասունս Ի՛Գ. որ են այսու թիւ. բառաչել, բշել, կոնշել, զոչել, բնշել, մնշել, քրշել, կառայնշել, մոմուել, ճշել, կանշել, զոհոհել, վշել, խանշել, փառաշել, առածել, կաղկանծել, Կաղկ, կանդանշել, զոհել, որ է կարկաչել, սողալ ստովին ղալ, մնջնջել, ճոճուել, և սա առնու ի ձայնից և զըծէ զուզաթիւս առ ամենայն ձայնս, որ մի առ մի երգեն սոքօք ձայն ըստարեալս՝ Որքան որ մեր աւանդութիւնը ութ ձայների հեղինակութիւնը կամ դաստարմու վերագրում է Ս. Սահակին և Ս. Մեսրոպին, այնուամենայնիւ Ստեփանոսի կամ ուրիշների մասին եղած ակնարկութիւնները անիմաստ չեն: Որովհետեւ Ստեփանոս Սիւնեցու զործունէութիւնը Հայկական հայկերը երդի զարգացման մի շրջան է եղրափոկում: Նա իր Ժամանակի աչքի ընկնող դիտուններից մէկն է եղել: Աշակերտել է նշանաւոր վարդապետների, կատարելապարծուել է Բիւզանդիայում և Հռոմում: Գրել է ճառեր, կատարել մեկնութիւններ, թարգմանութիւններ և միաժամանակ եղել է աչքի ընկնող երաժիշտ և հոգեւոր երգերի հեղինակ, Քանի որ Ս. Սիւնեցին եղել է Աթէնքում, կատարելազործուել է դիտումութիւնների մէջ, լուսատեղեակ էր քրիստոնէական եկեղեցական երաժշտութեան և քնդահանրապէս արարողութիւնների իր Ժամանակի բոլոր հարցերին. ուստի պէտք է կարծել որ Հայկական եկեղեցական երաժշտութեան մէջ ութ ձայնի ներդրումը այդ ընդհանուր երեսօթի դասերու միջոցով է իր զուգէր և Սի զուգէ մի քանի պարզ առողանութեան նշաններ աւանդ մնալով Ս. Սահակի և Ս. Մեսրոպի Ժամանակից, Ս. Սիւնեցու Ժամանակ աւելի զարգացել են և կազմաւորուել: Սիւնեցին էլ, որպէս Ժամանակի հմուտ երաժիշտ, կարգաւորել և դասաւորել է դրանք ութ ձայների բաժանելով: Նոյն պարագան Ծ. Տնտեսեանը ակնարկում է Սաչաւուր Տարծնեցու մասին^(***):

Հետաքրքիր է նաեւ Ս. Մելիքեանի այն կարծիքը թէ ութ ձայնի դրութիւնը մեր ստեղծադործութիւնը չէ, այլ փոխ է առ-

(***). Ծ. Տնտեսան, «Վարդապիւր Երզնց», 1988. Կ. Պոլիս:

նրանք Ռեդանդականից, այն էլ ո՛չ միտա-
մանակ՝ ինչպէս աւանդութիւնն է թելադ-
րում՝ այլ չորս բուն ձայները վերցրել ենք
եւ. Դարում Ս. Սահակի ժամանակ, իսկ չորս
կողմերը, որոնք ԺԳ. Դարից առաջ զոյու-
թիւն չունէին ոչ մի եկեղեցում, պիտի ներ-
մուծըած լինեն Հաւանորէն Ստեփանոս Ի-
մաստասէր Սիւնեցու ձեռքով ոչ ուշ քան Ը.
Դարը: Իսկ ըստ Գանձակեցու վկայութեան,
Սալաուտը Տարօնեցին ԺԲ. Դարում ամե-
նայն Հաւանականութեամբ ինքն է ձայնազ-
րել ամբողջ շարականը, որի համար մեծ
Հոչակ է վաստակել ժամանակակիցներից իր
երաժշտական արուեստի համար(****):

Մեր աւանդութիւնը, ինչպէս նշեցինք
վերը, ութ ձայների դրութիւնը վերաբրում
է Ս. Սահակին և Ս. Մեսրոպին: Այս աւան-
դութիւնը յարգուել է և շարահնոցի առա-
ջին էջում իսկ տեղաւորուել են նրանց ա-
նուանները: Սակայն աւանդութիւնը աւան-
դութիւնն է, և բոլորովին ճշմարիտ չէ, ու-
րիշհետեւ չորս Հինական բուն ձայները
յոյների մօտ զոյութիւն են ունեցել շատ վաղ
ժամանակներում: Յունաց աւանդութեամբ
այդ չորս բուն ձայները վերագրում են
Սենեզեփին, Փլեասեփին, Սոփիեյսփին և Գի-
պանոսին (Ա.՝, ԶԲ., ԶԴ., ԶԳ.): Ուրեմն,
որպէս կորակապետութիւն ձայների գործածու-
թեան ժամանակի և հեղինակների մասին.
պէտք է ասել որ մենք չորս բուն ձայները
(Ա.Չ., ԲԶ., ԴԶ., ԳԶ.) վերցրել ենք յոյնե-
րից, որովհետեւ Բ.—Ե. դարերում եկեղեցա-
կան արարողութիւնները կատարում էին
յունարէն լեզուով, ուստի պէտք է ենթադրել
նաեւ յունական երաժշտութեամբ, և Ս. Սա-
հակի և Ս. Մեսրոպի ժամանակ Հնարուել
են չորս կողմերը (ԱԿ., ԲԿ., ԴԿ., ԳԿ.) և
կրկու ստեղները: Իսկ Ս. Սիւնեցու ժա-
մանակ դրանք կարգաւորուել են և դրուել
ամբողջ իմօքերի վրայ: Ըստ Փրօֆ. Գ. Բուշ-
նարեանի, Հայկական երաժշտութեան մէջ
ձայնը իրենից ներկայացնում է մեղեդիի մի
տեսակ, որին յատուկ է որոշակի լազ կամ
լազերի մի խումբ, որոշակի թեմատիկով և
մեյրոտիայի ծաւալման Հաստատուն մեւեր:

Եւրոպոսիւր ձայն ունի իր «զարձուածքը»,
ւրն իր մէջ ընդգրկում է նոր լազ և նոր
մեյրոտը: Դարձուածքը ուրիշ բան չէ.
Եթէ ոչ տուեալ ձայնի մտաւիւլացիոն դարգա-
ցումը: Յաճախ բուն եղանակից վերնախա-
ղով անցում է կատարում ոչպի առեւտը
ձայնի դարձուածքը (ընդունուած է յաճախ
դարձուածքի փոխարէն վերնախաղ ասել.
մինչեւ այսօր էլ ծերունի բաճանաները դար-
ձուածքի փոխարէն վերնախաղ են ասում):
Չայնրը՝ ԱԶ., ԲԶ., եւ այլն, մեր այրու-
րենի տառերն են, որոնք Հերթականութեան
համար իրր թուեր են վերցուել և Զ (ձայն)
դիրք աեւլացնելով ստացուել է ԱԶ. (առա-
ջին ձայն), իսկ ԱԿ. (առաջին կողմ): Եւ այն
մեւով է եղել նաեւ յոյների մօտ, այն տար-
րիւրութեամբ որ նրանք ձայնը և կոպը նախ
օլտագործել են և ապա թուերը՝ ա, բ, գ,
դ: Եւրպականների կամ երգերի տեսակները
ձայնորով են որոշում:

ԱԶ. կամ առաջին ձայն: Այս ձայնին են
պատկանում 126 շարականներ, պարզ և
դարձուածք: Պարզ շարականներն են՝
«Ուրբ Ես Տէր», «Երկնաբաղաբային», «Որ
Վերօրհնես», «Հրաշակեալ և Զօրեղ»,
«Հայր Բազումողորմ», «Որ Ի Լեռին Այլա-
կերպման» և այլն: Դարձուածք են՝ «Պ Գէն
Հայեմբ», «Այսօր Յարեալ», «Ժողովեալք
Ի Յիւստակի» և այլն:

ԱԿ. կամ առաջին կողմ: Այս ձայնին են
պատկանում շարահնոցի դերթէ կէսը՝ 828
շարականներ: Բուն ձայնին են պատկանում
«Արեգականն Արդարութեան», «Որհուրդ
Անճառ», իսկ դարձուածքներ՝ «Որք Զարգա-
րեցին», «Այսօր Կանգնեցաւ», «Առաքեցաւ Ի
Հօրէ»: ԱԿ.ին են պատկանում նաեւ «ԶԻդ
Տու Քալի» և «Իմ Զինար Եարը» զեղչկական
Լրկերը:

ԲԶ. կամ երկրորդ ձայն: Այս ձայնով են
կրկում 108 շարական: ԲԶ. եղանակը դար-
ձուածքներ շատ քիչ ունի, շարականները
մեծամասնութեամբ պարզ են կրկում:
Պարզ ԲԶ. եղանակ ունեն՝ «Դարձո Զցա-
սունն», «Պ Գերեզման Քո Կանխեցի», «Որ
Թաղաւորք Ես Թաղաւորաց»: Դարձուածք
են՝ «Անթառամ Մաղիկ», «Որ Ի Յարա-
շարք», «Զարմանայի է Ինձ»: Այս վերջինը
աւելի յատուկ եղանակ ունի և միւս դար-
ձուածքների նման չէ: ԲԶ. եղանակ ունեն

(****) Ս. Միլիեմ, «Յունական Աղանցութիւն
Հայ Երաժշտութեան Տեսակնի Վրայ», 1914, Թիֆ-
լիս:

նաեւ Վերս Սեւաւոր Աղջիկ» և «Ղարսոյ Բերդը Փլել Ա» ժողովրդական երգերը:

Բ4. կամ աւագ կոզմ: Այս ձայնով են երգուած 108 շարական: Այս եղանակն էլ շատ քիչ դարձուածք ունի, ինչպէս ԲԶ. եղանակը: Բ4. եղանակը աւելի նաեւ ստեղծներ, որոնք տարբերուած են ԴԿ. եղանակի ստեղծներէն: զբանք ԲԿ. եղանակի և ստեղծի խառնուրդ են, օրինակ՝ «Որհնեցէջ Մանկունք», «Որ Յանէից»: Այս ձայնին են պատկանում «Իմաստուն Կուսանք», «Պաշն Կեարար»:

ԳԶ. կամ երրորդ ձայն: Այս ձայնին են պատկանում 145 շարականներ, պարզ և գարձուածք: Այս եղանակի պարզ տեսակներն են՝ «Լուսաւորեալ Երուսաղէմ», «Ուրախ Լէր», «Զարիական Մահ Սրբոց», «Որ Ողորհեցար Յերկինց»: Այս եղանակի վրայ են կառուցուել նաեւ ժողովրդական «Կայլի Երգը» և «Հոյ Արա Եզը» երգերը:

ԳԿ. կամ երրորդ կոզմ: Այս եղանակին են պատկանում 96 շարականներ: ԳԿ. եղանակը ընդհանրապէս երգուած է պարզ. դարձուածքները մեծամասնութեամբ անյետացած են: Այս եղանակին են պատկանում «Լեւրինք Ամենայն», «Տուր Մեզ Տէր», «Յաղթող» շարականները:

ԴԶ. կամ չորրորդ ձայն: Այս ձայնին պատկանում են 210 շարական: Պարզ ԴԶ. են երգուած՝ «Որ Զնորհս», «Հրաշափառ», «Համբառնամ Առ Քեզ», «Առաքելոյ Աղաւնոյ», «Պորհուրդ Պորին»: Այս ձայնի դարձուածքները աւելի ճոխ են. «Նոր Սիոն», «Կենդանարար Աստուած», «Կանանցն Կան-

խելով» և այլն: ԴԶ. եղանակներէ մէջ մի տեսակ էլ կայ, որ ԴԶ.ի և ստեղծ խառնուրդ է. օրինակ՝ «Երկնաւոր Փետայ», «Անժամանակը Աստուած», «Տեսեալ Զքեզ Մահու» և այլն: ԴԶ. ստեղծներէ զբնթէ իրոյնն են ԴԿ. ստեղծներէ հետ: ԴԶ.ին են պատկանում նաեւ «Ղարիբ Եմ», «Լուսանկն Անուշ» և «Անճրեւ Եկաւ» ժողովրդական երգերը:

ԴԿ. կամ վերջ ձայն: Այս ձայնին են պատկանում 191 շարական: Այս եղանակի պարզ տեսակն են՝ «Առաքեալ և Նախփայ», «Արեւելջ Գեարբին», «Էջմիածին», «Բան Որ Ընդ Լոր» և այլն: Դարձուածք են՝ «Անճինք Նուիրեալք», «Նորահարաչ», «Այսոր Անճառ»: Հետաքրքիր է Ե. Տեսեսեանի կարծիքը այս հարցում. «Մովորարար երգերու շատերը ԴԿ. եղանակի վրայ նշանակուած են, բայց անոնց շատը յատուկ եղանակներ ունին, ինչպէս «Աստուած Անեղ», «Նորատեղծեալ», «Արարչական» և այլն: Ասոր պատճառով է, որ ոտանաւոր երգերու շատեր ժամակարգութեանց մէջ իբր արտաքոյ ձայնից դուրս ընդհանրապէս չեն ընդգրկուած: Նշանակուած են իբր վերջնական ձայնի վրայ: ԴԿ. եղանակը շատ առնչութիւն ունենալով ստեղծներէ հետ, կան բազմաթիւ ԴԿ. եղանակներ՝ որոնք մի քիչ ծանր երգելով ստեղծի տպաւորութիւն են թողնում: Օրինակ՝ «Ժւղարբից Կանանցն», «Այսոր Ի Լեռին», «Որ Վասն Մեր Յերկին» և այլն: Մի ձայնի պարզ կամ դարձուածք լինելը կարող ենք իմանալ նաեւ տուեալ ձայնի կամ դարձուածքի խազերի տեսակից և քանակից:

(Շար. 3)

ԶՕՀՐԱՊ ՍՐԿ. ՇԱՄԼԵԱՆ

